ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 5, 1957 Общественные науки

Մ. Սոդոմոնյան

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅՐՇՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԱՄԱՐ

(1921—1925)

Հայաստանում Սովետական կարգերի հաստատումով հայ ժողովուրդն ընդմիշտ ազատագրվեց դարավոր ճնշումից ու շահագործումից։ Սովետական իշխանության հաղթանակից անմիջապես հետո անհրաժեշտ էր ռեսպուբլիկայում անհապաղ սկսել ծայր աստիճան քայքայված ժողովրդական տնտեսության վերականգնումը։ Ունենալով Սովետական Ռուսաստանի որոշակի փորձը, Կոմունիստական պարտիան գտնում էր, որ վերականգնման ժամանակաշրջանում արհմիությունների կազմակերպումն ու նրանց կազմակերպչական ամրապնդումը խիստ անհրաժեշտ է, նրանց միջոցով աշխատավորական լայն մասսաներին տնտեսական քայքայման դեմ պայքարի հանելու, կարգապահությունն ամրապնդելու և աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու համար։ Պարտիան գտնում էր, որ չի կարելի երկրում վերականգնել արդյունաբերությունը, առանց այդ գործի մեջ ներգրավելու արհմիություններում ընդգրկված բանվորական լայն մասսաներին։ Ահա թե ինչու ՀԿՊ-ն արհմիությունների կազմակերպմանը ձեռնամուխ եղավ երկրում Սովետական իշխանության հաղթանակից անմիջապես հետո։ Սովետական իշխանության հաղթանակի շնորհիվ Հայաստանում լայն չափով ծավալվում են արհմիութենական կազմակերպությունները, որոնք սերտորեն համախմբվելով Կոմունիստական պարտիայի շուրջը, խոշոր դեր խաղացին ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության վերականգնման գործում։

Առաջին համաշխարհային պատերազմը, ազգամիջյան ու քաղաքացիական կռիվները միանգամայն քայքայել էին երկրի ժողովրդական տնտեսությունը, Հայաստանը դարձրել ավերակների կույտ, իսկ նրա ազգաբնակչությանը՝ մատնել սովի։ Քաղաքացիական կռիվների ժամանակ դաշնակների կողմից ժամանակավորապես օկուպացված գավառներում առաջացան սարսափելի ավերածություններ ու սով։ Հայաստանից փախչելով դաշնակների «կառավարությունը» հափշտակել է մոտ մեկ փութ ոսկի, 750 միլիոն ռուբլի սովետական թղթադրամ և այլն[1]։ Դաշնակները ամբողջովին փչացրին երկաթուղագիծը, վատնեցին Սովետական իշխանության կողմից հավաքված սերմացուն, մորթոտեցին մեծ քանակությամբ անասուններ և այլն ու դրանով իսկ մեծ փոսաններ հասցրին երկրին։ «Լեռնային գավառներից՝ Ալեքսանդրն ու Ղարաքիլիսան թալանված ու ավերված էին հիմնովին։ Զանգեզուրը, Դարալագյազը ու Իջևանը սովի ու ծանր օրեր էին ապրումք»[2]։

[1] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 26 նոյեմբերի, 1921, Երևան։

[2] ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարիատների 1920—1922 թթ. հաշվետվությունը, էջ 16, Երևան, 1923։

Սովետական ռեսպուբլիկաներից ոչ մեկը չէր ստացել այնպիսի ժառանգություն՝ փլուզում և թշվառություն, ինչպիսին ստացել էր Հայաստանը։

Նոր կյանքի շեմքին կանգնած Հայաստանի Սովետական իշխանությանն առաջ ծառացել և իրենց լուծումն էին պահանջում տնտեսական, քաղաքական ու կուլտուրական բազմաթիվ խնդիրներ։ Երկրում բացակայում էին պարենային մինիմալ ռեսուրսները, բանակն ու բնակչությունը հացի խիստ կարիք էին զգում, կուլակները հացը թաքցնում էին Սովետական իշխանությունից, երկրի տերիտորիայի մի մասը (Լոռու չեզոք գոտին, Զանգեզուրը, Ալեքսանդրապոլն իր գավառով, Հայաստանի միակ երկաթուղու հիմնական մասը) գրաված էր հակասովետական վինված ուժերի կողմից։ Անհրաժեշտ էր նորաստեղծ Սովետական ռեսպուբլիկան ապահովել իմպերիալիստական հրոսակախմբերի ռեստավրացիայի վտանգից, տնտեսական ու կուլտուրական ամուր կապ ստեղծել սովետական մյուս ռեսպուբլիկաների հետ։ Կոմունիստական պարտիան իր առաջ դրել էր արդյունաբերության և գյուղատնտեսության զոդման, նրա մեքենայացման, բանվորական որակյալ ուժի պատրաստման, ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերը տեխնիկական դեկավար կադրերով ապահովելու, գործազրկության վերացման, աշխատավորական լայն մասսաների կուլտուրական զարգացման անհետաձգելի խնդիրները։

Կոմունիստական պարտիայի ու Սովետական կառավարության գլխավոր խնդիրն էր երկիրն արագորեն դուրս բերել քայքայված, աղքատիկ վիճակից և սովետական մյուս ռեսպուբլիկաների հետ միասին հաստատակամորեն առաջ տանել սոցիալիստական շինարարությունը։ Հայաստանի Կ(բ)Պ-ն մոբիլիզացիայի ենթարկեց ռեսպուբլիկայի բոլոր աշխատավորներին՝ պատերազմի ու դաշնակների թողած վերքերը բուժելու, արդյունաբերության, գյուղատնտեսության և տրանսպորտի վերականգնումը կենսագործելու համար։ Երկրի ծանր տնտեսական վիճակի ու նրա վերականգնման գործում պարտիական կազմակերպությունների խնդիրների մասին ՀԿ(բ)Պ Կենտկոմի 1920 թ. դեկտեմբերի դիմումի մեջ կոչ էր արված հավատարիվել Հայաստանի մարտիկներին, անշեղորեն ընթանալ Հոկտեմբերյան ռևոլյուցիայի գծած ուղիով, պատրաստ լինել կռվի, ունենալ պարտիական խիստ կարգապահություն։ 1921 թ. ապրիլին, երբ արդեն ջախջախված էր փետրվարյան ավանտյուրան, ՀԿ(բ)Պ Կենտկոմը պարտիայի դավկոմներին ու պարտիայի անդամներին ուղղած իր մեկ այլ կոչում գրել է. «Շնորհիվ մեր ուժերի մաքսիմալ լարմանը, անսպառ եռանդի ու ինքնազոհության հաղթանակով դուրս եկանք քաղաքացիական պատերազմից։ Ներկայումս, երբ պարզորեն ստեղծված է դադար, մեր առաջ ծառացած է երկրի տնտեսական ֆրոնտի կազմակերպման խնդիրը, որը պահանջում է մեզանից անկասկած գերագույն ճիգեր, ուժեր ու աշխատանքի մաքսիմում կենտրոնացում»[1]։ Պարտիայի Կենտկոմի կոչը լայն արձագանք գտավ ոչ միայն պարտիական կազմակերպությունների, այլև արհմիութենական ու մյուս բոլոր կազմակերպությունների կողմից։ Երկրի ժողովրդական տնտեսության վերականգնման բնագավառում Կոմունիստական պարտիան պատասխանատու խնդիրներ դրեց բոլոր աշխատավորների և արհմիությունների առաջ։ Սովետական Հայաստանում այդ խնդիրների կենսագործման համար մեծ նշանա-

[1] ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆ. 40 113, գ. 22, թ. 97։

կությունն ունեցավ Սովետական Ռուսաստանի և եղբայրական մյուս ռեսպուբլիկանների օգնությունը։

Վերականգնման ժամանակաշրջանում ձեռք բերված իր բոլոր հաջողությունների համար հայ ժողովուրդը պարտական է Սովետական Միության եղբայրական ժողովուրդների, առանձնապես ռուս ժողովրդի անշահախնդիր օգնությանը։ Ռուսաստանի Սովետական կառավարությունը 1921 թ. Հայաստանի աշխատավոր գյուղացիությանը բաց էր թողել 60 000 փութ սերմացու, 100 000 փութ հացահատիկ, 6000 հատ գյուղատնտեսական տարբեր գործիքներ[1]։ Վ. Ի. Լենինը 1920 թ. դեկտեմբերին ընդունելով ՀՍՍՌ Ռևկոմի անդամներին, նրանց հետ ունեցած զրույցի ժամանակ ասել էր. «Մենք ինքներս դժվարին դրության մեջ ենք, բայց Խորհրդային Հայաստանին կօգնենք ամեն կերպ»[2]։ ՀՍՍՌ Ռևկոմի անդամ Ա. Մռավյանը 1920 թ. դեկտեմբերին իր հետ բերեց Լենինի կարգադրությամբ ՌՍՖՍՌ Ֆինժողկոմատի կողմից Հայաստանին բաց թողված երկու միլիարդ ռուբլի թղթադրամը, որը ոսկու հաշվով կազմում էր մոտ 600 000 ռ.։ 1921 թ. հունվարի կեսերին Սովետական Հայաստանը Ռուսաստանից ստացել է մեկ ու կես միլիոն արշին մանուֆակտուրա, վեց ամսվա դեղորայք, 700 փութ լրագրի թուղթ, մեկ վագոն գրականություն և այլն։ Նախատեսված էր Հյուսիսային Կովկասից Հայաստանի համար ուղարկել ամսական 25 000 փութ հաց[3]։ 1921 թ. ապրիլի վերջերին ՌԿ(բ)Պ ԿԿ որոշմամբ Հայաստան մեկնեց պարտիայի ու Սովետական պետության ակտիվ գործիչ Ալեքսանդր Մյասնիկյանը (Մարտունի), որն իր հետ ռեսպուբլիկայի աշխատավորների համար բերեց 20 վագոն պարենային ու արդյունաբերական ապրանքներ։ Ռուսաստանից բերվող ապրանքներին ճանապարհին ավելանում են Ադրբեջանի աշխատավորների նվերները Հայաստանի աշխատավորներին (մի քանի վագոն բուսական յուղ ու բրինձ)։

Դեռևս ՌԿ(բ)Պ 9-րդ համագումարը (1920 թ. մարտի 29-ից ապրիլի 5-ը) մատնանշել է տնտեսական շինարարությանը արհմիությունների մասնակցության անհրաժեշտությունը։ Համագումարը նշեց, որ չի կարելի հաջողությամբ լուծել տնտեսական խնդիրները առանց արհմիությունների մասնակցության։ Համագումարի դիրեկտիվների հիման վրա արհմիությունները անմիջականորեն դեկավարելով տնտեսությունը, ամեն կերպ մասնակցում էին արտադրության կազմակերպմանը, նպաստում աշխատանքային կարգապահության բարձրացմանը (ընդհուպ մինչև ընկերական կարգապահական դատարաններին դիմելը), ընդհանուր պրոպագանդայի ու ագիտացիայի հետ միասին նաև արտադրական պրոպագանդա մղում, բանվորներին ներգրավում բանվորական տեսչության աշխատանքներին, օգնում բանվորական ադմինիստրատորների ընտրությանը, հետևում գնահատում կոնֆլիկտային հանձնաժողովների գործունեությանը և այլն։

Երկրի ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման գործում կարևոր նշանակություն ունի աշխատանքի իրավունքի պաշտպանությունը, որի բացակայությունը մեծ կորուստների հետ է կապված ոչ միայն ամ-

---

[1] Տե՛ս ՀՍՍՀ Բանվորների, Գյուղացիների և Կարմիրբանակայինների Պատգամավորական Խորհուրդների առաջին համագումարի արձանագրությունը, էջ 17, Երևան։

[2] Ա. Մռավյան. «Լենինի մոտ», «Խորհրդային Հայաստան», 29 նոյեմբերի, 1925։

[3] Տե՛ս «Կոմունիստ», Երևան, 1921, № 35։

բոլոր ժողովրդական անտեսության, այլև բանվորների համար։ Պաշտպանելով իրենց անգամների նյութական ու կենցաղային շահերը, արհմիությունները խոշոր աշխատանք են կատարել աշխատանքի պաշտպանության ասպարեզում։ Տնտեսական քաղաքականության նոր կուրսի հետևանքով արհմիությունները իրենց աշխատանքի կենտրոնը արտադրության կազմակերպման ընդարձակից փոխադրեցին աշխատանքի պաշտպանության ընդարձակը։ Սովետական Ռուսաստանի օրինակով Հայաստանի բոլոր ձեռնարկություններում, հիմնարկություններում ու տնտեսություններում, որտեղ կային գործարանային կոմիտեներ կամ տեղկոմներ, սկսած 1922 թ. կազմակերպվեցին աշխատանքի պաշտպանության հանձնաժողովներ։ Աշխժողկոմատը գործում էր արհմիությունների սերտ համագործակցությամբ։

Ինդուստրիկայի ժողովրդական տնտեսության վերականգնման տեմպն արագացնելու և բանվորների կենցաղը բարելավելու հիմնական պայմաններից մեկն էլ տարիֆային հարցերի ճիշտ լուծումն էր, նրանց կանոնավորումը։ Ինչպես Սովետական Ռուսաստանում և միութենական մյուս ռեսպուբլիկաներում, այնպես էլ Հայաստանում տարիֆային քաղաքականությունը միշտ նպատակ է ունեցել արդյունաբերության ու պրոլետարիատի շահերի պաշտպանությունը։ 1921 թ. մայիսի 14-ին Աշխժողկոմատի տարիֆային բաժինը լիկվիդացիայի ենթարկվեց և նրա գործերը հանձնվեցին ՀԱՄԽ-ի համապատասխան բաժնին։ Այդ առթիվ Հայաստանի Ռևկոմի հրամանում ասված էր. «Այն բոլոր որոշումները, որը պայմանի Ա. Հ. Արհմիությունների Խորհուրդը տարիֆի դատավորման հարցերի վերաբերմամբ, պարտադիր են պետական, հասարակական և մասնավոր հիմնարկությունների ու ձեռնարկությունների համար»[1]։ ՀԱՄԽ-ի տարիֆային բաժնի կողմից որոշումներ ընդունվեցին Սովետական Հայաստանում Ռուսաստանի տարիֆների 50 տոկոսը ժամանակավորապես հավելումով կիրառելու, բանվորներին ու ծառայողներին չորս կարգի բաժանելու և տարիֆային այլ հարցերի վերաբերյալ։ Երկրի ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում լավագույն մասնագետների խիստ կարիք էր զգացվում։ Նրանց բացակայությունը և աշխատանքի անկանոն վարձատրությունը նվազեցնում էին աշխատանքի արտադրողականությունը արդյունաբերության մեջ։ Ստեղծված աննորմալ դրությունը վերջ տալու համար երկրում սկսեց կիրառվել տարիֆային նոր քաղաքականություն, բան որի պահանջվում էր աշխատանքը վարձատրելիս հաշվի առնել աշխատավորի ընդունակությունը, աշխատանքի բնույթը, արտադրանքի որակը և այլն։ Տարիֆային նոր օրենքը, որը Հայաստանում սկսեց կիրառվել 1921 թ. վերջերին, ամրապնդում էր արդյունաբերության հիմունքները և ապահովում պետական ապարատի հաջող գործունեությունը։

Ինդուստրիկայի ժողովրդական տնտեսության վերականգնման աշխատանքները Սովետական Հայաստանում սկսվեցին նախ և առաջ գյուղատնտեսությունից։ Վ. Ի. Լենինը իր 1921 թ. ապրիլի 14-ի նամակում՝ ուղղված Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Թաղստանի և Լեռնային ռեսպուբլիկաների կոմունիստ ընկերներին, պահանջում էր «իսկույն աշխատել բարելավել գյուղացիների դրությունը և սկսել էլեկտրիֆիկացիայի, ոռոգման խոշոր աշ-

[1] ՀՍԽՀ Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 2-րդ, էջ 33։

խատանքներ։ Ոռոգումը կվերստեղծի երկիրը..., կամրապնդի անցումը դեպի սոցիալիզմ»[1]։

1921 թ. հունիսի 24-ին ՀՍԽՀ ժողկոմսովետը ընդունեց «Պարենատրքի մասին» հայտնի դեկրետը։ Նվազագույն չափով սահմանված պարենհարկի նպատակն էր բարելավել աշխատավոր գյուղացիության տնտեսական դրությունը, բարձրացնել գյուղացու շահագրգռվածությունը արտադրության բարձրացման գործում։ Այդ դեկրետի համաձայն, սահմանված տուրքը վճարելուց հետո, գյուղացու արամադրության տակ էին մնում նրա եկամտանների ամբողջ ավելցուկը։ Եպին անցնելու կապակցությամբ առանձնապես սուր կերպով դրվեց արհմիությունների դերի և մասնակցության հարցը՝ ժողովրդական տնտեսության վերականգնմանը։ ՌԿ(բ)Պ 10-րդ համագումարը նշեց, որ արհմիությունները լինելով պրոլետարիատի դիկտատուրայի հենարանը, պետք է բոլոր բանվոր-ծառայողներին ընդգրկեն սոցիալիստական շինարարության մեջ։ Վ. Ի. Լենինը նշելով արհմիությունների՝ նրանում ընդգրկված բանվոր դասակարգի տեղն ու դերը երկրի քայքայված տնտեսության վերականգնման գործում, միաժամանակ հստակորեն ուրվագծեց աշխատավոր գյուղացիության մասնակցության ձևերն այդ խնդրում։ Պարտիայի 10-րդ համագումարում նոր տնտեսական քաղաքականությանն անցնելու անհրաժեշտության մասին տված իր զեկուցման մեջ Լենինը նշում էր, որ խոշոր արդյունաբերության վերականգնումը, որից և կախված է ամբողջ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերափոխման գործը, անհնարին է առանց գյուղացիական լայն մասսաների մասնակցության, առանց բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության դաշինքի ամրապնդման։ Ուստի պարտիան արհմիությունների առաջ խնդիր դրեց ուժեղացնել բանվոր դասակարգի կազմակերպական ու իդեական ազդեցությունը գյուղի աշխատավոր մասսաների վրա։ ՀԱՄԽ-ը ՀԿՊ-ի դեկավարությամբ ձեռնամուխ եղավ այդ դժվարին խնդրի կատարմանը՝ Սովետական Հայաստանում։

1922 թ. սկզբներին սկսվեցին Հողի և անտառի աշխատողների արհմիության կազմակերպման աշխատանքները։ Հողանտառ աշխատողների արհմիության խնդիրն էր բատրակներին արհմիությունների մեջ ընդգրկելու միջոցով բարելավել նրանց տնտեսական դրությունը, սահմանափակել վարձակալողների իրավունքները բատրակների նկատմամբ և պայմաններ ստեղծել վերջիններիս դասակարգային գիտակցությունը բարձրացնելու համար։ Այդ խնդիրների կատարման ընթացքում Հողի և անտառի աշխատողների արհմիությունը հասավ հսկայական հաջողությունների։ Գյուղին պրակտիկ օգնություն ցույց տվեց ՀԱՄԽ-ի գյուղատնտեսական բաժինը, որը մշակում էր 1921 թ. իր տրամադրության տակ եղած 10 այգիները։ ՀԱՄԽ-ի գյուղբաժնի գործունեությունը ուսանելի փորձ հանդիսացավ գյուղատնտեսության, առանձնապես այգեգործության վերականգման ընթացքում աշխատողների համար։ Սովետական Հայաստանի առաջին սերմնարուժարանի խնամքն ու նրանում լավորակ սերմեր աճեցնելու նախաձեռնությունը պատկանում է Երևանի արհմիության անդամ բանվորներին։ Արհմիությունների միջոցով մեծ գումարներ հավաքվեցվին ջրանցքների կառուցման, առուների վերանորոգման և գյուղատնտեսական կադրերի պատրաստման համար։ Միայն Կոմունալ տնտեսության

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, 4-րդ հրատ., էջ 404։

աշխատողների արհմիությունը 230 միլիոն հայկական սովետական դրամանիշ[1] է հատկացրել Շիրակի ջրանցքի կառուցմանը և արժանացել ջրանցքի կառուցման կոմիտեի շնորհակալությանը[2]։ Արմենտայի փոքրիկ կոլեկտիվը, որը բաղկացած էր 15 հոգուց, Շիրակի ջրանցքի ֆոնդին արհմիության միջոցով նվիրաբերել է 500 միլիոն հայկական սովետական դրամանիշ, որի համար Լուսավորության աշխատողների արհմիության քաղաքային կոնֆերանսը 1923 թ. հունվարի 4-ին որոշել է Արմենտայի տեղկոմին գրել Կարմիր տախտակի վրա[3]։ «Մինչև հունվար (1923 թ.— Մ. Ս.) Շիրակի ջրանցքի կառուցման վարչությունը ստացել է արհմիություններից՝ խորհ. աշխատավորներից 3790 միլիոն ռուբլի, Լուսաշխից՝ 2799 միլիոն, Կոմունալնիկներից՝ 1724 միլ., Բուժսանիտարական աշխատողներից՝ 5600 միլ., Կաշեգործներից՝ 1002 միլ., Կար ու ձևի աշխատողներից՝ 1700 միլ., Սննդհամի արհմիությունից՝ 1700 միլ., Ժողկապից՝ 900 միլիոն ռուբլի։ Բացի այդ Ամերկոմի Կազաչի պոստի բանվորները հավաքել են 2325 միլ. ռուբլի։ Այսպիսով մինչև հունվարի 1-ը արհմիությունները ավել են ջրանցքի կառուցման օգտին 21 միլիարդից ավելին։ Հավաքվել են միայն 4 կամ 5 օրվա աշխատավարձերը, մնում է հավաքելու 3 օրվանը ևս»։

Գյուղատնտեսության վերականգնման համար մղվող պայքարում կարևոր դեր խաղացին նաև շեֆ բջիջները, որոնք Սովետական Հայաստանում նոր երևույթ էին։ Շեֆության նպատակն էր ամեն կերպ օգնել գյուղատնտեսության բարձրացմանը, գյուղացիությանը համախմբել Սովետական կառավարության շուրջը, հիմնականում ուշադրություն դարձնելով անտեսական-շինարարական աշխատանքներին, չանտեսելով նաև կուլտուր-կրթական խնդիրները։ Արհմիութենական կազմակերպությունները կոմբջիջների հետ միասին վերցնելով գյուղի շեֆությունը, կազմակերպում էին դասախոսություններ ու զեկուցումներ, օգնում տնտեսության վերականգնմանը, մոբիլիզացնում էին գյուղի բոլոր ուժերը շինարարական աշխատանքների (ճահիճների չորացում, դաշտերի ոռոգում, ճանապարհների ու կամուրջների նորոգում և այլն) համար։ Ռեսպուբլիկայի բոլոր արհմիությունները վերցրել էին մեկից մի քանի գյուղերի շեֆություն։ Օրինակ՝ Լուսժողկոմատի կոլեկտիվը հանձն էր առել Երևանի գավառի Ախտայի գավառակի Ինդամալ ու Քարվանսարա (աժմ Աթաբեկյան) գյուղերի շեֆությունը։ Այդ կոլեկտիվի կողմից գյուղ ուղարկված ընկերները իրենց հետ տանում էին դասագրքեր, գրենական պիտույքներ և տեղերում օգնում գյուղատնտեսական ինվենտարի վերանորոգմանը։

Հայաստանի գյուղատնտեսության մեջ կարևոր տեղ է գրավում բամբակագործությունը։ Բամբակի բերքատվությունը երկրում բարձրացնելու նպատակով, արհմիությունները բոլոր հնարավոր միջոցները գործադրում էին բամբակագործությամբ զբաղվող գյուղացիությանը համապատասխան մանուֆակտուրայով բավարարելու, նրանց անխափան կերպով հացահատիկ մատակարա-

---

[1] 1921 թ. դեկտեմբերի 31-ի կուրսով հայկական սովետական դրամանիշով 400 000 ռ. հավասար էր մեկ ռուբլի ոսկով։ Իսկ սովետական դրամանիշները հայկական չեկերից 15 անգամ թանկ էին (Տե՛ս «Խորհրդային Հայաստանի հինգ տարին», 1920—1925 թթ., էջ 107)։

[2] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 5 հունվարի 1923, № 3, Երևան։

[3] Տե՛ս նույն տեղում, 7 հունվարի 1923, № 5, Երևան։

[4] Տե՛ս նույն տեղում, 19 հունվարի, 1923, № 14, Երևան։

ռելու, բամբակացան շրջանները, տրակտորներ ուղարկելու, որակյալ սերմեր ու պարարտանյութեր ձեռք բերելու, փորձադաշտեր կազմակերպելու և աշխատանքը ճիշտ հունով առաջ մղելու համար[1]։

Արհմիությունների այս և նման այլ միջոցառումները մեծապես նպաստեցին երկրի գյուղատնտեսության արագ վերականգնմանը։ *Օրինակ՝ եթե Սովետական Հայաստանում 1922 թ. ցանված էր նախապատերազմյան ցանքսերի 30 տոկոսը, 1923 թ.՝ 74 տոկոսը, ապա 1925 թ. ցանքսերի տարածությունը երկրում կազմում էր նախապատերազմյանի 90 տոկոսը[2]։ Դեռ 1924 թ. վերջին տեխնիկական կուլտուրաների ցանքսային տարածությունը ռեսպուբլիկայում արդեն հասել էր նախապատերազմյանի 141 տոկոսին[3]։ Այդ թվականին բերքատվության նախապատերազմյան մակարդակը զգալի չափով գերազանցվեց՝ 5,8 ցենտների դիմաց (1913) հասնելով 7,6 ցենտների[4]։ Մեծ առաջադիմություն էր նկատվում նաև անասնապահության, այգեգործության և գյուղատնտեսության մյուս ճյուղերի բնագավառում։ 1925 թ. վերջին խոշոր եղջյուրավոր անասունների գլխաքանակը կազմում էր նախապատերազմյանի 93 տոկոսը, մանր եղջյուրավորներինը՝ մինչև 80 տոկոսը, խոզերինը՝ 135 տոկոսը և այլն[5]։*

Գյուղատնտեսության վերականգնման գործընթաց վերականգնվում ու զարգանում էր երկրի արդյունաբերությունը։ Աշխատանքի արտադրողականությունը արտադրական ձեռնարկներում բարձրացնելու նպատակով արհմիություններն իրենց նիստերում՝ կոնֆերանսներում, ընդհանուր ժողովներում և այլն, կանոնավոր կերպով լսում էին հիմնարկ-ձեռնարկների ղեկավարների զեկուցումները և միջոցառումներ մշակում գոյություն ունեցող թերությունները վերացնելու համար։ Բացի այդ, արհմիությունները լավագույն մասնագետներից առաջադրում էին հանձնաժողովներ, որոնք հետևում էին տվյալ տեղամասի ամենօրյա անցուդարձին, տնտեսության ամբողջ կյանքին։ Այդ հանձնաժողովները կոչվում էին տնտեսական հանձնաժողովներ։ Այն հարցերը, որոնց լուծումը տնտեսական հանձնաժողովների ուժերից վեր էին, լուծվում էին արհմիութենական բազմամարդ ժողովներում։ Այդպիսի ժողովներ էին հանդիսանում տնտեսական խորհրդակցությունները, որոնք հրավիրվում էին ամիսը մեկ անգամից ոչ ավելի։ Առանձնապես հետաքրքիր էին անցնում տպագրիչների, սննդի և համի, տեքստիլ արդյունաբերության բանվորների և մի շարք այլ արհմիությունների կողմից հրավիրվող արտադրական խորհրդակցություններ։ 1923 թ. փետրվար ամսում տպագրիչների արհմիության նախաձեռնությամբ հրավիրվեց տվյալ արհմիության կենտրոնական վարչության անդամների, տեղկոմների և տպագրական գործի լավագույն մասնագետների տնտեսական խորհրդակցություն, որտեղ 2-րդ անգամ քննարկվեց հրատարակչության և տպագրական գործի միացման հարցը։ Տնտեսական խորհրդակցությունն արձանագրեց, որ անհրաժեշտ է միացնել Հայաստանում գոյություն ունեցող բոլոր տպարանները։ Տպագրիչների արհմիության կողմից հրավիրված

---

[1] Տե՛ս ՀՍՍՌ ՊԿԱ, ֆ. 65, ց. 3, գ. 79, թ. 36։
[2] Նույն տեղում, ֆ. 65, ց. 1, գ. 145, թ. 93։
[3] Նույն տեղում, թթ. 96—97։
[4] Տե՛ս Соц. Строительство Арм. ССР (1920—1940 гг.), № 67, стр. 27.
[5] Տե՛ս ՀՍՍՌ ՊԿԱ, ֆ. 65, ց. 1, գ. 145, թ. 96։

անտեսական խորհրդակցության որոշումն արժանացավ Հայաստանի Սովետական կառավարության հավանությանը։ Տպարանների միացման հետևանքով 1923 թ. արտադրությունն աճեց 280 տոկոսով։ Արհմիությունները եռանգուն աշխատանք ծավալեցին Հայաստանի պղնձահանքերի վերականգնման ուղղությամբ։ Ղափանի պղնձահանքերի գործարկման առաջին իսկ օրերից արհմիություններն այնտեղ ժրաջան աշխատանք սկսեցին։ Արհմիության անդամների ուժերով, մինչև 1925 թ. հունվարի 10-ը կարգի բերվեցին գործարանի շրջակայքը, ջրերի խողովակները, վերանորոգվեցին բանվորական տները, հանրակացարանները և այլն։

Արհմիություններն իրենց արտադրանքի արդյունքները ներկայացնում էին դանազան ցուցահանդեսներում։ 1924 թ. հոկտեմբերի 11-ին Երևանի բանվորական ակումբի ամառային շենքում բացվեց արհմիությունների կողմից կազմակերպված արդյունաբերական ցուցահանդեսը։ Այնտեղ մասնակցում էին 11 արհմիություն. Մետաղագործների արհմիությունը ցուցադրել էր մեխանիկական գործարանը՝ իր պատրաստած բոլոր գործիքներով, Կառուցողների արհմիությունը՝ տնային կահկարասիների արհեստանոցը, Հողի և անտառի աշխատողների արհմիությունը՝ պտուղների առանձին տեսակները, նոր ձևով մշակված բամբակ և այլ բույսեր, Կոմունալնիկների արհմիությունը՝ լույսերի զարդարանքներ, էլեկտրական, տակառների արհեստանոց, օճառի գործարան, «Արարատ» գործարանը՝ բոլոր տեսակի գինիները, կոնյակ, սպիրտի տեսակներ..., Բժշկա-սանիտարական աշխատողների արհմիությունը՝ տրոպիկական հիվանդ դեղորայքի տեսակներ, Ջուլհակների արհմիությունը՝ դանազան գործվածքներ, ջուլհականոց, որտեղ ցուցադրված էին բամբակի մաքրման, մանելու, գործելու և գործվածքը կտրելու ամբողջ ընթացքը և այլն։ Ինսպուբլիկայի արդյունաբերության վերականգնման գործում ձեռք բերված հաջողությունների ցուցադրումը նոր խթան հանդիսացավ հետագա տնտեսական վերելքի համար։

Երկրի ժողովրդական տնտեսության մեջ մեծ դեր էր խաղում տնայնագործական արդյունաբերությունը։ Հայաստանը նախապատերազմյան տարիներին ունեցել է տնայնագործության բազմապիսի ճյուղեր։ Այդ ճյուղերի վերականգնման առաջին փորձը Հայաստանում կատարեց Կար ու ձևի աշխատողների արհմիությունը, որի կենտրոնական վարչությունն իր 1924 թ. օգոստոսի 20-ի նիստում քննարկեց այդ հարցը և որոշեց տնայնագործների կազմակերպումը համարել անհրաժեշտ ու հանձնարարել միության քարտուղարությանը անցնելու գործնական աշխատանքների։ Կար ու ձևի աշխատողների արհմիության կենտրոնական վարչության օրինակին հետևեցին մյուս արհմիությունների կենտրոնական վարչությունները։ Տնայնագործական արդյունաբերության զարգացումը բացի ապրանքային սովի դեմ կռվելու լավագույն միջոց լինելուց, նաև գյուղում եղած գործազրկության դեմ պայքարելու լավագույն ձևերից մեկն էր։

Չկար ժողովրդական տնտեսության մի բնագավառ, որի վերականգնմանը արհմիություններն այս կամ այն չափով մասնակցություն ունեցած չլինեին։

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան, փշրելով կապիտալիզմի շղթաները, նյութական պայմաններ ստեղծեց ժողովրդի ունևոր կյանքի համար։ Երկրի ժողովրդական տնտեսության վերականգնման հետևանքով տեղի էր ունենում աշխատավորական մասսաների նյութական բարեկեցության

բարձրացում։ Բանվոր-ծառայողների ռեալ աշխատավարձը բարձրացնելու, կայուն դրամական սիստեմ ստեղծելու, լայն սպառման ապրանքների գները սիստեմատիկաբար իջեցնելու, արդյունաբերական ապրանքների և գյուղատնտեսական մթերքների գների միջև եղած անհամաչափությունը վերացնելու, աշխատավորների կրթության և առողջապահության գործը բարելավելու ու նման այլ միջոցառումներով Կոմունիստական պարտիան ու Սովետական կառավարությունը անշեղորեն բարելավում էին աշխատավորական հոծ մասսաների նյութական դրությունը։ Օրինակ՝ եթե 1925 թ. հունվար ամսում Սովետական Հայաստանի մեկ բանվորի միջին աշխատավարձը եղել է 40,12 չերվոն ռուբլի, ապա նույն թվականի դեկտեմբեր ամսում այն հասել է 44,72 ռուբլու, իսկ մեկ տարի հետո (1926 թ. դեկտեմբերին)՝ 46,62 ռուբլու[1]։

Նույն տարիների ընթացքում պետության, հասարակական-կոոպերատիվ կազմակերպությունների կողմից և անհատական շինարարության կարգով կառուցվել են 3579 շենք՝ 83 859 քառ. մետր բնակելի տարածությամբ[2]։ Պահածոների արդյունաբերությունը 1925 թ. հասել էր 1913 թ. արտադրանքի 80 տոկոսին[3], կաշվի արդյունաբերությունը իր արտադրանքի չափով հասել էր 1913 թ. մոտ 58 տոկոսի։ 1924 – 1925 թթ. վերականգնվեց Ալավերդու պղնձաձուլարանը և արտադրվեց մեծ քանակությամբ պղինձ։ Այդ թվականին Զափանի և Ալավերդու գունավոր մետալուրգիայի ձեռնարկությունները հիմնականում վերականգնվեցին։ Սովետական իշխանության առաջին հինգ տարիների ընթացքում Հայաստանում հին էլեկտրակայանների վերանորոգման հետ միասին կառուցվեցին նորերը։ Արդյունաբերության մի շարք ճյուղեր իրենց արտադրանքով նույնիսկ գերազանցել էին նախապատերազմյան մակարդակը։ Այսպես էր օճառի արտադրությունը, որը նախապատերազմյան մակարդակը 1925 թ. գերազանցել էր 18,3 տոկոսով, փայտամշակությունը՝ 55 տոկոսով, էլեկտրաէներգիայի արտադրությունը՝ մոտ երկու անգամ, պոլիգրաֆ արդյունաբերությունը՝ 5 անգամ։ 1925 թ. վերջին ավելի ցայտուն էին գյուղատնտեսության բնագավառի հաջողությունները։ Եթե խոշոր արդյունաբերության ամբողջ համախառն արտադրանքը հասել էր նախապատերազմյան մակարդակի 60 տոկոսին, ապա ամբողջ գյուղատնտեսության համախառն արտադրանքը կազմում էր նախապատերազմյանի 86 տոկոսը։ Հացահատիկային, տեխնիկական կուլտուրաների, կարտոֆիլի, բանջարա-բոստանային կուլտուրաների և ցանովի խոտերի ցանքային տարածությունը 1925 թ. հասել էր 285,4 հազար հեկտարի, նախապատերազմյանի 314,6 հազար հեկտարի դիմաց (90,7 տոկոս)[4]։ Գյուղատնտեսությունը համարյա լրիվ վերականգնվել էր։ Հացահատիկային կուլտուրաների համախառն արտադրանքի գծով նախապատերազմյան մակարդակը լրիվ վերականգնված էր։ Ինչ վերաբերում է տեխնիկական ու յուղատու կուլտուրաների արտադրանքին, ապա այն բավականին գերազանցել էր նախապատերազմյան մակարդակը։ Այդպիսով, 1925 թ. ժողովրդական տնտեսության վերականգնման աշխատանքը, ինչպես ողջ Միության մեջ, այն-

---

[1] Տե՛ս Խորհրդային Հայաստանը թվերով, Վիճակագրական տեղեկատու, 1923—1927 թթ., էջ 160։

[2] Նույն տեղում, էջ 264—265։

[3] Տե՛ս ՀՍՍՌ ՊԿԱ, ֆ. 40/113, ց. 1, գ. 334, թ. 46։

[4] Նույն տեղում, ֆ. 65, ց. 7, գ. 1050, թ. 36—41։

պես էլ Սովետական Հայաստանում ընդհատ մոտենում էր իր վախճանին։ Սովետական սոցիալիստական բոլոր ռեսպուբլիկաները ապրում էին կյանքի պրոցես, արագորեն ամրապնդվում էին այդ ռեսպուբլիկաների ուժն ու հզորությունը։ ՀԿՊ 4-րդ համագումարը (1925 թ. նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 4-ը) մատնանշել է, որ «Կոմունիստական կուսակցության տնտեսական քաղաքականությունը երկրում առաջ բերեց տնտեսական վերելք։ Մի շարք ճյուղերում մեր տնտեսությունն անցել է նախապատերազմյան շրջանից... Ընթացիկ տարում մեր տնտեսությունն ընդհանուր առմամբ ավարտեց իր վերականգնման պրոցեսը»[1]։ Համագումարն իրավամբ նշեց, որ վերականգնման ժամանակաշրջանում ռեսպուբլիկայի արդյունաբերության, տրանսպորտի և գյուղատնտեսության վերականգնման ու զարգացման գործում Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ հակալական ծառայություններ մատուցեցին բավականին թիվ կազմող ու մեծ ուժ դարձած արհմիությունները։ Համագումարն առանձնապես ընդգծեց աշխատանքի արտադրողականության բարձրացման նպատակով գործարքային սիստեմի կիրառման ու ամրացման, այդ բնագավառում տնտեսավարների մի մասի դիմադրությունը կոտրելու խնդրում արհմիությունների բացառիկ դերը։ Ընդհատելով արհմիությունների աշխատանքը համագումարը միաժամանակ պահանջում է՝ չհանգստանալ ձեռք բերածով և արհմիությունները պարտիական լավագույն աշխատողներով ապահովելու միջոցով մոբիլիզացիայի ենթարկել նրանց ուժերը երկրի առաջ ծառացած նոր խնդիրները պատվով կատարելու համար։

Սովետական Հայաստանի արհմիությունները ժողովրդական տնտեսության վերականգնման համար մղած իրենց պայքարում հետևում էին Սովետական Ռուսաստանի արհմիությունների օրինակին, ընդօրինակում նրանց հարուստ փորձը, ղեկավար ցուցումներ ստանում ՀամԿՄ-ից։ Այդ օգնության շնորհիվ է՛լ ավելի ամրապնդվեց ՍՍՌՄ ժողովուրդների եղբայրական բարեկամությունը, ՍՍՌՄ-ը վերածվեց հզոր, հարուստ ու անպարտելի տերության։ Ռուսաստանի օգնությամբ վերականգնելով երկրի ժողովրդական տնտեսությունը, Սովետական Հայաստանը բռնեց ինդուստրացման ուղին։

Հայաստանի Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ ռեսպուբլիկայի արհմիությունները ձեռնամուխ եղան երկրի ինդուստրացման ժամանակաշրջանի խնդիրների կատարմանը։

---

[1] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի պարտ. արխիվ, ՀԿՊ 4-րդ համագումարի բանաձևեր, էջ 337։